

Կապանի համայնքապետարանի կողմից նախատեսվող «ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի Վաչագան գետի հունի մաքրման, նոր հենապատերի կառուցման, առկա հենապատերի վերականգնման և Վաչագան գետի ավազանի (Գարեգին Նժդեհի հուշահամալիրի շրջակա հատվածից մինչև «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հարակից կամուրջ) էսթետիկ տեսքի ձևավորման» աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկման

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

15.11.2024 թ.

ք. Կապան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածի /այսուհետ՝ Հավելված/ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք ՀՀ Սյունիքի մարզի Կապանի մշակույթի կենտրոնում / ՀՀ, Սյունիքի մարզ, Կապան, Չարենց 1 շենք/ 2024 թվականի նոյեմբերի 12-ին, ժամը 11:00-ին տեղի ունեցավ Կապանի համայնքապետարանի կողմից նախատեսվող «ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի Վաչագան գետի հունի մաքրման, նոր հենապատերի կառուցման, առկա հենապատերի վերականգնման և Վաչագան գետի ավազանի (Գարեգին Նժդեհի հուշահամալիրի շրջակա հատվածից մինչև «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հարակից կամուրջ) էսթետիկ տեսքի ձևավորման» աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին «Ջինջ» ՍՊ ընկերության և Կապանի համայնքապետարանի աշխատակիցներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ Գոռ Թադևոսյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրակարգը:

Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Առավոտ» օրաթերթի 2024 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 173 (7174)

համարում, Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի ([www.kapan.am](http://www.kapan.am)) հայտարարություններ բաժնում:

Համաձայն ՀՀ կառավարության 28.12.2023թ. N 2343-Ն որոշման 21-րդ կետի՝ վերը նշված հանրային քննարկման վերաբերյալ Ձեր առաջարկությունները, դիտողությունները և կարծիքները կարող եք ներկայացնել ծանուցումից հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հանրային քննարկման վերաբերյալ դիտողություններ կամ առաջարկություններ մինչ այսօր չեն ստացվել:

Ձեկույցի համար խոսքը փոխանցվեց «Ջինջ» ՍՊ ընկերության բնապահպան՝ Արմինե Հովսեփյանին:

**Ձեկույց (Արմինե Հովսեփյան)** - Շնորհակալություն խոսքը փոխանցելու համար: Փաստորեն մենք ծրագրի իրականացման նախնական փուլում ենք գտնվում և մեր ինժինեները որոշակի աշխատանքներ արել են: Այդ աշխատանքների հիման վրա մենք ունենք նաև շրջակա միջավայրի նախնական ուսումնասիրության իրականացված հաշվետվությունը, որը ներառում է նախատեսվող գործունեության տեղանքի, տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները: Ուսումնասիրվել է շրջանի կլիմայական պայմանները, մթնոլորտային օդի որակը, որպեսզի մենք հասկանանք, թե շինարարության ընթացքում այդ մթնոլորտային օդի որակի վրա ինչ ազդեցություններ ենք ունենալու: Ուսումնասիրվել են ջրային ռեսուրսները՝ մակերևութային ջրային ռեսուրսների օրինակով, գետերի հողային ռեսուրսները, կենսաբազմազանությունը: Կենսաբազմազանությունը վերաբերում է ինչպես ամբողջ տարածքին, այսինքն՝ տարածաշրջանային կենսաբազմազանությանը, այնպես էլ կոնկրետ իրականացման վայրի կենսաբազմազանությունը, բուսական աշխարհը, կենդանական աշխարհը, ինչպես նաև գետի կենդանական ու բուսական աշխարհը: Այսինքն՝ գետի կենսաբազմազանությունը նույնպես ուսումնասիրվել է: Տարածաշրջանի վտանգված էկոհամակարգերն ենք ուսումնասիրել, այդպիսով կա՞ն էկոհամակարգեր, որոնք վտանգված են և արդյոք մեր աշխատանքները ինչ-որ ազդեցություն ունենալու են այդ վտանգված տարածքներին, թե ոչ: Բացի դրանից, երբ արդեն նախագծի ամբողջական փաթեթը կլինի, այսինքն՝ կոնկրետ կունենանք թե ի՞նչ գործողություններ պետք է արվեն, ինչքա՞ն ժամանակում պետք է արվեն, այդտեղ արդեն մենք ռիսկերի գնահատումն ենք իրականացնելու, ի՞նչ ռիսկեր կան շրջակա միջավայր: Պետք է ասեմ նաև մենք գնահատելու ենք սոցիալական ռիսկերը: Այսինքն՝ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի վրա ինչ ռիսկեր կլինեն, տրանսպորտի

երթևեկության վրա ինչ ռիսկեր կլինեն, մարդկանց առողջապահական և անվտանգության ինչ ռիսկեր կարող են առաջանալ: Ռիսկերը պետք է գնահատենք նաև աշխատանքի անվտանգության ռիսկերը, այսինքն՝ այն շինարարության ժամանակ աշխատողների, բանվորների ռիսկերը: Այնտեղ պետք է գնահատենք նաև մթնոլորտային օդի աղտոտման խնդիրները, ջրային և հողային ռեսուրսների աղտոտումը: Աղմուկի ազդեցությունը և՛ բնապահպանական, և՛ սոցիալական խնդիր է, որ երբ, ինչ ժամանակահատվածում պետք է աշխատեն, թույլտվությունը ինչ ժամանակահատվածի համար է, որպեսզի բնակիչներին այդ աղմուկը չխանգարի: Նաև թափոնների կառավարման համար պետք է հատուկ պլան մշակվի: Այսինքն՝ շինարարության ժամանակ շինարարը պետք է հատուկ թույլտվություն ունենա համայնքից, շինարարության ժամանակ առաջացած թափոնները որտեղ պետք է տանեն, որովհետև, եթե հենապատերը մենք փոխարինում ենք, առաջանալու են շինարարական թափոններ և այդ շինարարական թափոնները որտեղ պետք է տանեն: Գնահատվելու են նաև արտակարգ իրավիճակների ժամանակ ռիսկերը, ինչ արտակարգ իրավիճակներ կարող են առաջանալ այդ շինարարության ժամանակ և ինչ միջոցառումներ պետք է անեն այդ արտակարգ իրավիճակներին արձագանքելու համար: Եվ եթե ունենք տարածքում ինչ-որ փոխհատուցման խնդիր, եթե ասենք որևէ բնակչի տարածք ենք մտնելու, եթե որևէ բնակչի գույքին վնաս ենք հասցնելու, արդեն ավելի հստակ կերևա աշխատանքային նախագիծը ունենալու ժամանակ և այդ ժամանակ կորոշվի, թե փոխհատուցումները ինչպես պետք է կատարել: Բացի նրանից պետք է մշակվի նաև ռիսկերի նվազեցման և մոնիթորինգի պլան: Այսինքն՝ պլան, թե ինչպես պետք է այդ ռիսկերը նվազեցնել և ինչ հաճախականությամբ պետք է այդ մշտադիտարկումները անենք, ո՞վ պետք է անի այդ մշտադիտարկումը, ի՞նչ ժամանակում պետք է կատարի: Եվ նաև շրջակա միջավայրի բնապահպանական և սոցիալական կառավարման պլան, որտեղ պետք է ներառվի բոլոր հնարավոր ազդեցությունները, կանխարգելման միջոցառումները և այդ կառավարման պլանը պետք է մեր շինարարի մրցութային փաստաթղթերի մի մասը: Այսինքն՝ շինարարը նույնպես պետք է որոշակի գնահատումներ անի, թե այդ կառավարման պլանի միջոցառումներն իրականացնելու համար ի՞նչ գումարներ են անհրաժեշտ, ասենք նույն թափոնների տեղափոխումը, նույն օդի աղտոտումը կանխելու համար, մնացած բնապահպանական և սոցիալական ռիսկերը: Եվ ամենակարևոր մասերից է նաև մշտադիտարկումը, որ երևի տեխնիկական հսկիչների հետ նաև պետք է ունենան բնապահպանական, սոցիալական հսկողության մասնագետ, որ շինարարության ընթացքում հսկողությունը իրականացվի և

հսկվի արդյոք շրջակա միջավայրի կառավարման պլանում տեղ գտած միջոցառումներն իրականացվում են, թե ոչ: Եթե չեն իրականացվում, պարտադրվի շինարարին, որպեսզի դրանք իրականացվեն: Այսքանը, շնորհակալություն: Եթե ունեք հարցեր, խնդրեմ:

**Խոսք (Գոռ Թադևոսյան)** - Շնորհակալություն, հարցեր կա՞ն: Խոսքը փոխանցեմ պարոն Դավթյանին:

**Ջեկույց (Ահարոն Դավթյան)** - Բարև Ձեզ: Ինչպես արդեն նշվեց, սույն ծրագիրն իր մեջ ներառում է Վաչագան գետի Գարեգին Նժդեհի հուշահամալիրի տարածքից մինչև Կապանի բժշկական կենտրոն ընկած հատվածում գետի հունի մաքրման, հենապատերի կառուցման աշխատանքները: Ըստ տեխնիկական առաջադրանքի դրանք հիմնականում նախատեսվում է՝ գետի հունի մաքրում, հենապատերի հիմքերի ուժեղացում, վերականգնում, ամրացում, որոշ հատվածներում նոր հենապատերի կառուցում, մայթի երկայնքով բազրիքների վերանորոգում կամ բազրիքների տեղադրում, նոր ճաղավանդակների տեղադրում, մայթի նորոգում, ծառերի և արմատների հանում, լուսավորության համակարգի անցկացում: Նախագիծը ներկայումս գտնվում է մանրամասն մշակման փուլում: Նախնական բոլոր ուսումնասիրությունները իրականացված և ավարտված են: Մենք ունենք արդեն մշակված գլխավոր հատակագիծ, որը նախնական համաձայնեցած է համայնքապետարանի հետ: Եվ մի փոքր կարող եմ ավելի մանրամասն ներկայացնել, թե ինչ է նախատեսվում իրականացնել: Ուրեմն՝ տվյալ հատվածում գետի աջափնյա հենապատը, որն ամբողջությամբ գոյություն ունի, սակայն քայքայված վիճակում է, նախատեսվում է վերանորոգել: Դա մոտավորապես իրենից ներկայացնում է արտաքին շապիկ, բետոնապատվելու է, ամրացվելու է իր հիմքերը, որոնք հիմնականում լվացված են: Իսկ ձախափնյա հատվածում մենք որոշ հատվածներում ունենք արդեն նոր կառուցված հենապատեր: Դրանք հիմնականում սկզբնական հատվածն է: Իսկ դրանից հետո հիմնականում մոտ 500 գծամետր նախատեսվում է նոր հենապատերի կառուցում: Տարբեր տարիների ընթացքում այդ նոր հենապատի ուղեգծի հատածում տարբեր տարիների ընթացքում, բնակիչների կողմից իրենց սեփական միջոցներով կառուցվել են հենապատեր, որոնք որոշ տեղերում խախտել է նաև գետի բնական, հիմնական հունը: Եվ համայնքապետարանի կողմից խնդիր է դրվել, որ հիմնականում նոր հենապատի կառուցումը իրականացվել է այնպես ուղեգծի ընտրությունը, որպեսզի հիմնականում հնարավորություն լինի վերականգնել գետի բնական հունը: Սակայն հաշվի առնելով նաև փաստացի իրավիճակը, որովհետև որոշ տեղերում մենք ստիպված ենք ընդունել փաստացի իրավիճակը: Քանի որ որոշ հատվածներում գետի հունը նեղացել է մինչև՝ 5-6 մետր, առաջարկվել է, որ նոր հենապատի

կառուցումը իրականացվի այնպես, որպեսզի գետի հունի լայնությունը հենապատերի վերին հատվածում պահպանվի 8,5 մետր: Այդ ամբողջ երկարությամբ՝ գետի հունի վրա բնակիչների կողմից կառուցվել են մետաղական կոնստրուկցիաներով կամուրջներ՝ տարբեր չափերի, տարբեր կոնստրուկցիայի: Նախագծով նախատեսվում է այդ բոլոր կամուրջները ապամոնտաժել և դրանց փոխարեն բնակիչների մուտքի համար նախատեսել նոր կամուրջներ: Յուրաքանչյուր երկու հողատարածքի համար՝ իրենց սահմանազատման կետի հոսով նախատեսվել է մեկ կամուրջ՝ մոտ 5 մետր լայնությամբ: Եվ դրանց ընդհանուր թիվը 13 է՝ մեկ հատ 3 մետր լայնությամբ կամուրջ է նախատեսվում և հետիոտնային մեկ կամուրջ՝ 1,2-2 մետր լայնությամբ: Նախատեսվելու է ամբողջությամբ աջակողմյան մայթի վերականգնում, լուսավորության իրականացում: Գետի հունը ամբողջությամբ մաքրվելու է՝ հեռացվելու են բոլոր ծառերը, թփերը, որովհետև ինչպես գիտեք հիմնական խնդիրը հենց գետի հունի հետ է կապված, որովհետև այնտեղ այնքան ծառեր են աճել, որ ցանկացած հեղեղի ժամանակ դա արդեն վտանգավոր է: Եվ մենք մոտավոր հաշվարկները ունենք, որ գետի հունի մաքրման համար մոտ 900 մետր խորանարդ գրունտ է հեռացվելու հունից: Իհարկե, դրա մի մասը կհեռացվի աղբավայր, մի մասը հնարավոր է կարիք լինի նոր հենապատերի հետևի մասում հետլիցք իրականացնելու: Հիմնական աշխատանքները սրանք են: Ես մոռացա ամենակարևորներից մեկը՝ գետի ձախափնյա հատվածի բնակելի հատվածի կոյուղիները ամբողջությամբ լցվում են այս պահին գետ: Ճիշտ է երկու հատվածում ունենք կենտրոնացված ջրահեռացում, որտեղ ինչ-որ թաղամասերից կենտրոնացված կեղտաջուրը հեռանում է դեպի հիմնական կոլեկտոր: Սակայն, դրանք էլ են վթարված և այս պահին էլի այդ կոլեկտորով այդ կեղտաջուրը լցվում է գետ: Մեր նախագծով նախատեսվում է ձախափնյա ամբողջ հատվածի կոյուղացումը կազմակերպել այնպես, որ հնարավորություն լինի կեղտաջրերը հեռացնել դեպի աջափնյա հատված՝ Մելիք Ստեփանյան փողոցով հեռացվող կոլեկտոր: Դրա համար մշակվել է արդեն գենպլանը: Որոշ տեղերում խողովակները, որոնք նախատեսվելու է անցկացնել հարթակների տակով, դրանք տեսանելի չեն լինելու: Որոշ տեղերում, քանի որ նիշերը թույլ չեն տալիս ստիպված ենք գետի հունով լայնական հատում անցկացնել: Իհարկե, դա լինելու է պատյան խողովակների մեջ, լրիվ ապահով և ամբողջությամբ կեղտաջրերը կանոնավոր կերպով կհեռացվեն արդեն քաղաքային ցանց:

**Հարց (Գոռ Թադևոսյան)** - Շատ լավ, տրված հատվածում որքան տեղյակ եմ գազատարեր չունենք չէ՞, գազատարերի ապամոնտաժման խնդիր կա, թե՞ ոչ:

**Պատասխան (Ահարոն Դավթյան)**- Գազատար կա տվյալ հատվածում, բայց համայնքապետարանն իմ տեղեկություններով դրա համար առանձին մրցույթ ունի և դրա համար առանձին նախագիծ է արվել՝ գազատարը գետի հունից տեղափոխելու համար: Այս նախագծում գազատարը ներառված չէ:

**Հարց (Գոռ Թադևոսյան)**- Շատ լավ: Այստեղ կար լուսավորության համակարգի անցկացում: Արդյո՞ք լուսավորության համակարգի անցկացման հետ մեկտեղ նախատեսված են այլ օպերատորների ենթակառուցվածքների համար տեղափոխություն: Խոսքն ինտերնետ ծառայություն մատուցող, կամ այլ ծառայություն մատուցող ընկերություններին է վերաբերում: Ունե՞ն այնտեղ ենթակառուցվածքներ և ի՞նչ է նախատեսված:

**Պատասխան (Ահարոն Դավթյան)** - Մեր ուսումնասիրությունների արդյունքում մենք արձանագրել ենք, որ մայթի որոշ հատվածներում կա «ԱրմենՏել» համակարգ, որոնք մեզ ներկայացրել են, որ մինչև շինարարական աշխատանքները սեփական ուժերով իրենց համակարգը կտեղափոխեն, մայթից կհեռացնեն:

**Հարց (Գոռ Թադևոսյան)** - Կա՞ նման համաձայնություն պարոն Գրիգորյան:

**Պատասխան (Կարեն Գրիգորյան)** - Հիմնականում շինարարության ընթացքում օպերատորների հետ աշխատանք տարվում է և իրենք իրենց ուժերով տեղադրումն իրականացնում են շինարարության ընթացքին զուգահեռ:

**Հարց (Գոռ Թադևոսյան)** - Այսինքն՝ պատրաստակամություն են հայտնել, որ շինարարության հետ զուգահեռ իրենք այդ ենթակառուցվածքներն անցկացնել:

**Պատասխան (Ահարոն Դավթյան)** - Սկզբնական հատվածում մայթի տակ ունենք նաև գոյություն ունեցող կոյուղու կոլեկտոր, սակայն, նոր մշակված գլխավոր հատակագծով արդեն մայթի հատվածում եղած կոլեկտորը շահագործումից դուրս է բերվելու, որպեսզի մայթի տակ ոչ մի կոմունիկացիաներ չունենանք: Մայթով անցնելու է մենակ լուսավորության հաղորդալարերը և գազատարը:

**Հարց (Գոռ Թադևոսյան)** - Շատ լավ, ևս մեկ հարց: Պարոն Դավթյան Դուք ասացիք, որ նախատեսվում է նաև ծառերի հեռացում: Խնդրում եմ պարզեցնեք, միայն գետի հունում գտնվող, թե՛ նաև մայթերում կան ծառեր, որոնք պետք է հեռացվեն կամ փոխվեն նորով: Այդ մասին մանրամասնենք:

**Պատասխան (Ահարոն Դավթյան)** - Գետի հունի ծառերն ամբողջությամբ պետք է հեռացվեն, իսկ մայթերի վրա կարելի է ասել ծառեր շատ քիչ կան՝ մեկ-երկու հատ, այն էլ համարյա ամբողջությամբ իրենց կենսունակությունը կորցրել են և չորացած վիճակում են:

Դրանք բոլորը հեռացվելու են և դրանց փոխարեն ամբողջ երկարությամբ մեր նախագծով մայթի վրա 4 մետր ինտերվալով նախատեսված են բներ, որտեղ պետք է տեղադրվեն նոր ծառեր:

**Հարց (Գոռ Թադևոսյան)** - Շատ լավ, այսինքն հիմա ունենք մեկ-երկու ծառ, բայց նախատեսվում է ամբողջ երկայնքով ծառատունկ:

**Պատասխան (Ահարոն Դավթյան)** - Այո:

**Խոսք (Գոռ Թադևոսյան)** - Շատ լավ, շնորհակալություն: Կա՞ն հարցեր:

**Հարց (Անդրանիկ Հովակիմյան)** - Կոյուղու համակարգը ձախ ափից աջ ափ տեղափոխելը ամեն տան համար առանձին է տեղափոխվելու, թե՞ օրինակ 10-20 տուն՝ նույն տեղով:

**Պատասխան (Ահարոն Դավթյան)** - Կախված իրադրությունից, կոմպլեկտավորվել է: Տեղ կա մի քանի տներ մի կետով է հեռացվում, տեղ կա օրինակ՝ 10-15: Ինքը կոմպլեկտավորվել է, որպեսզի ամեն տան համար առանձին անցում չիրականացվի: Խմբավորվել է՝ մի քանի տներ հավաքվել է, ինչպես հնարավոր է եղել և ինչպես նիշերը թույլ են տվել: Իհարկե, տեղեր կան, որ բացառություններ կան՝ առանձին տեղեր, օրինակ՝ հյուրանոցային համալիրի մոտ առանձին անցում է նախատեսվել: Դրանք, իհարկե, բացառություններ են: Բայց այդ ամեն ինչը նաև թելադրող է գործող համակարգի միջև:

**Խոսք (Գոռ Թադևոսյան)** - Շատ լավ, շնորհակալություն: Կա՞ն հարցեր:

**Լրացում (Էդուարդ Մեսրոպյան)** - Ես մի փոքր լրացում անեմ, եթե թույլ տաք: Ահարոնը նկարագրեց հիմնական աշխատանքի պայմանները, բոլոր աշխատանքները: Բայց մի հարց, որը կարևորվում է այս ծրագրի առաջադրանքի իրականացումը: Առաջին հերթին գետի ջրի հեղեղային ելքերից ապահովումը, որովհետև եթե մենք անցնենք ամբողջ տարածքով գետի հունին զուգահեռ, երևում է, որ բավականին տեղեր կան ծառերը և տիղմը, նստվածքը փակել են, նեղացրել են գետի հոսքի համար պայմանները և շատ հավանական է, որ մի քիչ հորդառատ անձրևների ժամանակ հեղեղման երևույթներ: Այդ իմաստով գետի մաքրումը բոլոր բուսական կամ խոչընդոտող տարրերի ջրահեռացումը կարևոր աշխատանք է այս ծրագրում: Եվ երկրորդը, բացի հիմնական կոմպյուտերական գծագրերից կամ ապապաշտպան կառույցներից կարևոր է նաև ելքի հաշվարը, որ ինչքանով է ապահովում գետի հունի կտրվածքը հեղեղային ելքերի համար: Մենք ուսումնասիրել ենք մոտավարապես 50-69 թ. մինչև այսօր եղած մաքսիմում ելքերը, որոնք եղել են այդ տարածքում և ըստ դրա հաշվարկվել են մաքսիմում հեղեղային հնարավոր առաջիկա 1000 տարվա կտրվածքով հնարավոր ելքերը,

որ կարող են լինել: Այսինքն՝ ավելի մեծ, քան՝ փաստացի մենք դիտարկել ենք այս վերջին 55 տարում: Եվ ըստ դրա կատարվել է հաշվարկ, որ ապահովում է նախագծող նախատեսվող կտրվածքը, ապահովում է ելքի անխոչընդոտ անցումը: Առանձին տեղեր, ամենանեղ տեղով, որտեղով հնարավոր չէ այլևս մի քիչ լայնացնել, որ բնակիչները մտել են գետի մեջ և պայմանները այնպես են, որ հնարավոր չէ, դա նույնպես ստուգվել է և տեսել ենք, որ դա ապահովում է: Այսինքն՝ այդտեղ վտանգավոր ոչինչ չկա: Ինչ եմ ուզում ասել, որ կառուցվածքը ինքը ապապաշտպան կառույց է ամբողջությամբ: Կառուցելուց հետո լրիվ ապահովելու է անխոչընդոտ անցումը ցանկացած հեղեղի ժամանակ, որը դիտարկվել է մինչև այսօր: Այսինքն՝ 1000 տարին մեկ անգամ եթե պատահի ելք՝ մենք ապահովում ենք դա: Դա էլ որպես լրացում:

**Խոսք (Գոռ Թադևոսյան)** - Շատ լավ: Շատ կարևոր էր այդ հանգամանքը հաշվի առնել, որովհետև այսօր այդ խնդիրներն առաջանում են համայնքներում: Շնորհակալություն: Կա՞ն այլ հարցեր: Եթե այլ հարցեր չկան, հարգելի հանրային լսման մասնակիցներ շնորհակալություն եմ հայտնում բոլորիդ հանրային քննարկմանը մասնակցելու համար:

**Հանրային քննարկման վարող՝**

**Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ**



**Գոռ Թադևոսյան**

**Նախաձեռնող՝**

**Կապանի համայնքապետարան**

**Համայնքի ղեկավար**

**Գևորգ Փարսյան**